

տերազմական արուեստը զարգացուց
Հայոց մէջ, և օտար երկիրներու տիրե-
լովը անոնց բարեմասնութիւնները հա-
ղորդել տուաւ իր հայրենակիցներուն :
Իր գործոցը վրայ յայտնի կը նշմարուի
մտաց հաստատութիւն և ազամանդեայ
կամք մը, որով հարկաւոր և օգտակար
դատած բաները անդրդուելի արիւն-
թեամբ մինչև 'ի մահ ձգնելով 'ի գործ
կը դնէր : Եւրամինն ալ աւելի պղնձէ
շինուած քան թէ հողեղէն ըսելու էր .
ցրտութիւն և տաք, մրրիկ և ձիւն և
սառնամանիք և տարափք անձրևոյ իրեն
առջև նոյն էին, և ձմեռուան խստու-
թիւններուն դէմ իր մարմինը բնական
վահան մըն էր : Իսկ իբրև զօրաց հրա-
մանատար և զօրավար յամենայնի յաղ-
թական՝ ոչ միայն իր աշխարհակալու-
թիւններն իրեն պարծանք են, այլ և
նոյն իսկ օտար պատմագրաց մեծամեծ
գովեստները . ինչպէս զինքը մեծ սե-
պելը քան զՂեքսանդր և քան զԴա-
րեհ, և Փլեդոնիոսի խօսքը՝ թէ Աթ-
ենայն Լափաւորաց հռոմէոս եղեալ պարթևն
Արտաշէս : Ի վերայ այսր ամենայնի կը
խոստովանինք որ Արտաշէս եթէ փո-
խանակ նոր երկիրներ ստանալու հայա-
ստանի և անոր իշխանութիւնը տիեզե-
րական ընել ջանալու, բոլորովին անոր
ներքին բարգաւաճանացն ետևէ ըլլա-
լու տար ինքըզինքը և ամէն կերպ բա-
րեկարգութեան կողմանէ գերազոյն ը-
նէր զանիկայ քան զամենայն ժողո-
վուրդս, աւելի օգտակար գործ ըրած
կ'ըլլար մարդկութեան և աւելի մեծ,
և այնչափ 'ի զուր հեղեալ արիւն խը-
նայած կ'ըլլար . որովհետև թէ որ իր
այն աստիճանի անհամար զօրքին զէն-
քերուն իւրաքանչիւրը մէյմէկ մարդ
միայն մեռուցած ալ ըլլան նէ, որչափ
կեանք պակսեր են այն ատեն աշխար-
հէս : Եւսկայն մեծ ուրախութիւն է
մեզ իր հայրենակցացո՝ որ գիտենք թէ
մեր քաջ թագաւորն իր կենաց վերջին
վայրկենին սրտանց հառաչանք մը ար-
ձակեց արտաքին ու առերևոյթ փա-
ռաց ունայնութեանը վրայ : Եւս, մար-
դուս իշխանութիւնը որչափ որ տարա-

ծուի ու ընդարձակածաւալ սահմաններ
առնու, լայնատարած խրոխտացեալ ծո-
վուն նմանցուր, որուն ալիքները հա-
զարաւոր մղոններ քալելէն ետքը՝ վեր-
ջապէս տկար ափունքի մը վրայ ողբա-
ձայն կը մեռնին : Եւ ով որ կ'ուզէ ցա-
մաք ոսկրներ միայն չթողուլ իր յիշա-
տակը մահունէն ետքը ուրիշներուն
միտքը բերող, թող սիրէ իր ազգը բո-
լորով սրտիւ, և անոր ներքին երջան-
կութեւր ամենայն հոգւով գործակից ըլ-
լայ . այնպիսին սիրախառն մեծարանաց
պատիւը կ'ընդունի Արտաշէսի պէս :

ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ապառաժն Արարիա և բարբ Արարացոց :

Նկարեսցիք 'ի միտս ձեր երկիր իմն
ապալեր և ծարաւուտ, արփի հրատո-
չոր, երկինք երաշտացեալ, դաշտս ա-
ւազեղէնս, և լերինս քան զսոսա ցամա-
քագոյնք, զորովք շուրջ տարածեալ ա-
չայն խոնջեալ լքանին կենդանութեան
գոյով անդ և ոչ մի ինչ նշան յոր իջեալ
հանգչիցին : Երկիր մեռելատիպ, կամ-
լաւ ևս ասել՝ երկիր կեղեքեալ 'ի հող-
մոց, յոր ոսկերոտիք և եթ և խիճք
աստ և անդ սփռեալք, և ժայռք ուղ-
ղաբերձ և կէսք թաւալեալ . անապատ
ամենեւին թափուր, ուր չեղև երբէք
ուղևորին ընդ հովանեաւ ոգի կլանել,
ուրանօր կենակից որ նմա չիք, և ոչ որ
զկենդանութիւն բնութեանն 'ի դէմ
ածիցէ նմա . ամենեւին ամայութիւն,
քան զամայութիւն անտառաց ևս ահա
գին յոյժ . զի անդ ծառք թուին իմն
բնակք առ մենացեալն ուղևոր, որոյ
աստէն քան զամենայն միայնութիւն
առաւել ևս անմարդացեալ կողոպուտ
յամենայնէ, յանմարդի և յանեզր բա-
ցավայրին՝ համայն ուրեք նշմարէ զիւր
գերեզման : Այլ յայլ ինչ ծագէ անդա-
նօր լուսաւորութիւն տուրնջեան տխրա-
դէմն քան զսղջամուղջ գիշերոյ, բայց
զմերկութիւն իւր հօրնեւ և զտկարու-
թիւն, և ածել նմա 'ի անտիլ զահագին

վտանգն յոր անկեալ կայ՝ հետախաղաղ ծածկելով յաչացնորա զպատնէշս սահմանափակ, և տարածելով շուրջանակի զանդունդսն ամբաւութեան որ անջըրպետ կայ ընդ նա և ընդ երկիրն բնակացեալ. ամբաւութիւն՝ յորմէ՝ ի զուր ճգնիցի անցանել, զի քաղց և ծարաւ և տօթ բոցատոչոր քաղէն սպառեն ի նմանէ և զմէն մի վայրկեան նշխարեալ նմա ընդ մէջ յուսահատութեան և մահու :

Սակայն գիտաց Ղրաբացին ուղտու իւրով անցանել և յինքն հանել զվայրսն, յորմէ՝ ի բաց դատարկացեալ էր բնութեան . նոքին ապաստանք են նորա, նոքին ամուրք հանգստեան նորա, և պահանորդք ազատութեանն : Ղլիցէ՞ որով իւրիք ոչ զեղծանիցին մարդիկ . Ղրաբացին այն ազատ և ինքնահրաման, ի հանգստի և ի ճոխութեան, փոխանակ մեծարանս դնելոյ անապատացս այսմիկ որ ազատութեան նորա են պատուարք, չաղախէ զնոսա յեղբուրնս . հատեալ անցանէ զնոքօք առ դրակիցս յազգաց բառնալ ի նոցանէ գերի և արծաթ . զանմարդի կայանս ի դիւր ելուզակութեանց իւրոց առնու, յորս ձախողակի իմն զուարճանայ նա քան ընդ ինքնիշխանն ազատութի . քանզի և յոր միանգամ բուռն հարկանէ՝ և ոչ մի ինչ է որ ոչ յաջողիցէ նմա : (1) Էպէս ի կասկածի կայցեն մեր ձակայքն հանապազ, և առաւել իսկ իցեն զօրութեամբ, սակայն ի դերև հանէ զհետամուտ պնդութիւն նոցա, և ածէ անպատուհաս զամենայն զոր միանգամ ի նոցանէն թափեաց : Ղրաբացի որ զասպատակութեան կեանս զայս կամիցի ընտրել, անդստին պնդէ զանձն ի տոկս ճանապարհին . տայ զանձն ի վարժս տքնութեանց և քաղցոյ և ծարաւոյ և տօթոյ, միանգամայն և զուղտ իւր հրահանգէ ի նոյն կէտ նպատակի : (2) Ետ ոչ բազում աւուրց ծնանելոյ նորա, թեքէ զսրունսն ընդ որովայնիւն, և ստիպէ զնա ընդ գետին կալ . և ի դադարեւն նորա այսպէս՝ բեռնիս դժուարակիրս բառնայ ի վերայ,

զի վարժեսցի տանել . և ոչ առնու ինչ ի բաց անտի, բայց զի զառաւելն ի վերայ յաւելուցու : (3) Կիզքն առնէ սանձ կերակրոց նոցին արկանել՝ չթողացուցեալ զարածանելն յարաժամ և զջուր ի ծարաւուն, և ձգէ երկայնէ տակաւ և զմիջոց ժամանակին, յապաւեալ և զկերակուրն անգամ : (4) Են ինչ յոյժ գան մարմնոյն, վարժէ յընթացս՝ յօրինակէ ձիանին գրգռեալ, մինչև թեթևս հանգոյն նոցին և քան զնոսա կորովիս յարդարել . ի վերջէ՝ յանյերկուանալ նորա զուժոյ, զթեթևութեան ուղտուցն, յայնժամ ապա իւրայնովքն և նոցա բեռնաւորէ զնոսա կերակրովք . չուէ նոքօք, և ահա յանկարծ ի գլուխ սահմանաց անապատին, անկանի ի վերայ որոց նախն ընդառաջեն, զառ և զապուռ ժողովէ յարկացն վայրավատին, և յաւարէն զուղտսն ծանրաբեռնէ . և թէ իցեն որ զհետ մտանիցեն, և փախուստ տաքնապափոյթ հարկ անհրաժեշտ ի վերայ, անդ հանդէս է մտաց իւրոց և նոցա ճարտարութեան : Հեծեալ յուղտուցն օղապար՝ առաջնորդէ հօտին անդադարս ի վազից զտիւ և զգիշեր ոչ ծարաւոյն և ոչ քաղցի ուշ եղեալ . զերիս հարիւր փարսախս հեշտեալ հատանէ յութօրէս, ոչ թօթափեալ ի թիկանցն զբեռինս յաւուրս անդ վաստակոց և չուոյ, և տայ նոցա հանգիստ ժամաւ չափ յաւուրն և բուռն մի հայս : (5) Եսպէս յաճախ զինն և կամ զտասն աւուրս ընթանան անջուր, և հանդուրժեն ծարաւոյ . և թէ երբէք եղտիւր փարսախուս կիսով հեռագոյն կայցէ՝ զջրոյն առնուն զհոտ . պասուք ծարաւոյն որ զնոսա տաքնապէն՝ շտապէ ըզքայլափոխս, և յայն մի նուագ զանցելոց և զնոյնքանի ապագայից ըմպեն զտեղի . զի եօթնեկաց յոգունց են յուրվակի ճանապարհք նոցա, և ըստ ձանապարհին են և պահոյն աւուրք :

ՊԻԻՖՈՆ